ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյանի թ/ֆ
Հեռ.՝ 055155305
Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2017 թվականի N 18

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 11-ի թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կո ղ մ -4 Դե մ -0 Ձե ռ ն պահ -0

1. ԳԱԼՈՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱՆԴՐՈ
4. ՅԱՅԼՈՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՅԱՅԼՈՅԱՆ

2017 թվականի հուլիսի « 11 »
գ. Շահումյանի թ/ֆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Շահումյանի թ/ֆ գյուղական համայնքի
ավագանու 2017 թվականի հուլիսի 11-ի թիվ 18 որոշման

1. Օրակարգը հաստատելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդային կարգով իրացման, հողամասերի ուղղակի վաճառքով վաճառելու կամ օգտագործման իրավունքով (վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով) մրցույթով տրամադրելու կանոնակարգը հաստատելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով վաճառելու մասին

Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լ. Ղասաբյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյանի թ/ֆ
Հեռ.՝ 055155305
Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2017 թվականի N 19 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԻՐԱՑՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ /ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ/) ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի, 14-րդ հոդվածի 6-րդ կետի, 23-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի «Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդային կարգով իրացման, հողամասերի ուղղակի վաճառքով վաճառելու կամ օգտագործման իրավունքով (վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/) մրցույթով տրամադրելու կանոնակարգը» համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ գյուղական համայնքի ղեկավար Արթուր Յայլոյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը

Ավագանու անդամներ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՈՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱՆԴՐՈ
4. ՅԱՅԼՈՅԱՆ ԱՇՈՏ

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** **ԱՐԹՈՒՐ ՅԱՅԼՈՅԱՆ**

2017 թվականի հուլիսի « 11»
գ. Շահումյանի թ/ֆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյանի թ/ֆ
Հեռ.՝ 055155305
Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2017 թվական N 20 -Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը .

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի սեփականություն հանդիսացող, Արմավիրի մարզ, համայնք Շահումյանի թ/ֆ հասցեում գտնվող, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության 04-078-0202-0032 ծածկագրի տակ գտնվող / Վկայական 10072017-04-0027/ 19.398 հեկտար հողամասը 654.700 ՀՀ դրամ մեկնարկային գնով, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության 04-078-0202-0033 ծածկագրի տակ գտնվող / Վկայական N 08062017-04-0050 / 17.088 հեկտար հողամասը 567.500 ՀՀ դրամ մեկնարկային գնով, գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքեր գործառնական նշանակության 04-078-0202-0034 ծածկագրի տակ գտնվող / Վկայական N 08062017-04-0039 / 16.554 հեկտար հողամասը 558.700 ՀՀ դրամ մեկնարկային գնով, գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության 04-078-0202-0035 ծածկագրի տակ գտնվող / Վկայական N 10072017-04-023 / 14.8833 հեկտար հողամասը 502.400 ՀՀ դրամ մեկնարկային գնով, որը հողամասերի կադաստրային արժեքի 50%-ն է, օտարել բաց աճուրդային կարգով :
2. Բաց աճուրդային կարգով օտարման մեկնարկային քայլ սահմանել հողամասերի մեկնարկային գների 5%-ը: Մասնակցության վճար սահմանել 5000 դրամ:
3. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, աճուրդն իրականացնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգին համաձայն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

Ավագանու անդամներ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՈՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱՆԴՐՈ
4. ՅԱՅԼՈՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՅԱՅԼՈՅԱՆ

2017 թվականի հուլիսի « 11»
գ. Շահումյանի թ/ֆ